

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

Մանուցման տողը
20 սանթիմ



rev. P. G. Ralenskarian Michalakis
tengasec № 4
Vienne

ՀԱՍՑԷ

Rédaction u journal

„Iraounk“

VARNA (Bulgaria)

Редакция

на ВѢСТНИКЪ

ИРАВУНКЪ

ВАРНА

Գրութիւնք եւ չեն
տրուիր

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՅՐ ՀԱՅՈՒՆ ԴԵՍ

Մենք ժամանակէ մը ի վեր շատ չենք ուզեր զբաղիլ մեր յեղափոխական կուսակցութեանց իրարու հետ ունեցած կռիւներով ու գզուբուքներով, բայց ի հարկէ չենք ալ կրնար բոլորովին մեր սիւնակները փակել այն տեսակ իրողութեանց առջև որոնք զգլխի ճնաւորութիւն ունին ու զայրոյթը կը գրգռեն է՛ն անտարբեր հայուն իսկ :

Կովկասի մէջ տիրող կառավարութեան, թաթար ազգաբնակչութեան եւ յետադիմական կամ հայտնաց ուսուցիչ պաշտօնեաներու հայ ժողովուրդին վրայ ի գործ դրած չարիքը իր գաղթնակէտին հասնելու սա պարագաներուն՝ յորս ամեն հայ իրարու թե ու թիկունք ըլլալու զիրար պաշտպանելու պարտական է, ի՛նչ կերպով կամ ո՛ր բառով կը վայել որակել այն եղբայրաբաւ ընթացքը որուն կը հետեւին այսօր Կովկասի մէջ Դաշնակցական եւ Հին Հնչակեան երկու հայ յեղ. կուսակցութիւնները : Մեր ընթերցողները կարգացին մեր նախորդ թիւի մէջ զետեղուած երևանի նամակը . նամակագիրը շատ արդարացի կերպով գիտել կուտայ թէ հայ կուսակցութիւններու մէջ եղած ընդհարումները առիթ կուտան ու պատճառ կը ստեղծեն ռուս կառավարութեան հայերը հալածելու, ինչ որ եղաւ ու կըլլայ այսօր Շուշիի եւ Գանձակի հայ գիւղերուն վրայ խաղախներու «պատժական» ջոկատներուն միջոցաւ, եւ արդարացը ներու հայերը զինաթափ ընելու ջանքերը :

Պարկաստանի հայաբնակ գաւառներու մէջ ալ նոյն գաղտնաբարտելի ընթացքը ունին այդ երկու հայ յեղափոխական կուսակցականները : ահա տեսէք թէ ինչ կը գրէ Արաքսի Դավրէթի թղթակիցը .

«Ասած կը լինէր անշուշտ Սալմաստի Փայաջուկ գիւղում կրկնուած Հնչակեան եւ Դաշնակցական

զինուորների ճակատամարտը, որը հինգ օր տեւեց, զոհ տարաւ երկու տեղացի Հնչակեան երիտասարդների, կառավարութիւնը թէեւ վճռել էր զիմել խիստ միջոցների նրանց անձնատուր անելու եւ ձերբակալելու համար, բայց տեղւոյս վաճառականացի խնդրանքի վրայ զ'ջանելով՝ յետագայէ էր գործադրութիւնը, մտածելով թէ նրանց անձնատուութեան ստիպումը կարող է առաջ բերել ընդհարումը յեղափոխականների ու զօրքերի միջև ու առիթ դառնալ ընդհանուր կոտորածի : Անցեալ օր՝ Սալմաստի գաղտնաբարտելու փախուցիկ գիւղատիրոջ ներկայացուցիչը բռնուած են յանկարծ Փայաջուկի երեւելիներից 15 ին եւ քահանաներից մէկին եւ ձեռքի ու նախաթիկնիքի տակ ստիպուած են յանձնել իրենց գիւղում ապաստանած եւ իրար գէտ կուր մղող յեղափոխականներին : Երբ խեղճ գիւղացիները յայտնուած են երեւց անդորութիւնն այդ պահանջը կատարելու՝ ենթարկուած են սաստիկ ծեծի եւ 200 թուաման տուգանքի : Անարգելուած ու գանակոծուած քահանան իր անկողինի միջից գրել է թաւրիզի թեմական կորիզին եւ դարձան խնդրել, բայց ոչ մի բաւարարութիւն չէ ստացել : Ասուած են որ թեմական կորիզները էլ ներկայացրել էր վեհ. Հայրապետին իր հրաժարականը, պատճառաբանելով, թէ առանց թեմական Առաջնորդի անհնար է արգիւնաւոր դարձնել իրենց պաշտօնավարութիւնը » :

Այս տողերը հաստատութիւնն են այն լուրին զոր մենք տուինք անցեալ շաբթու, թէ պարսիկ կառավարութիւնը խիստ կերպով պահանջներ է Սալմաստի փախուցիկ գիւղի հայերէն որ «իրենց հանգստութեան համար» պէտք է դուրս հանուին իրենց գիւղի մէջ գտնուող ամեն տեսակ օտարերկրացի հայ յեղափոխականներ, եւ ասոր համար (1000) հազար թուամանի խոստմնագիր առեր է հայ գիւղացիներէն :

Աստուծոյ սիրոյն, զգաստացէ՛ք պարոններ, ժամանակը չէ հայը հայուն դէմ կռուելու, մանաւանդ թէ այդ եղբայրաբաւ կըռիւնները պատճառ կը դառնան որ օտարներն ալ մեզ գէտ ելլեն հալածելու եւ կողոպտելու մեզ . ալ բաւական է. եթէ չը միացաք

զոնէ համերաշխ եղէք. եթէ այդ ալ չէք ըներ, զոնէ իրարու դէմ մի կռուիք :

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ՑՈՅՑԸ

Մեր ընթերցողներուն փոքր ի շատէ ծանօթ են Աղէքսանդրիոյ թաղ. խորհրդոյ խնդիրը եւ այդ մասին տարիներէ ի վեր շարունակուող ժողովրդական բողոքները՝ ընդդէմ ամիրայութեան, ապօրինութեան եւ անբարոյականութեան : Օրմանեան պատրիարք ալս եռագոյն աղտերը ուղեց յաւերժացնել ու բնաւ ականջ չտալ ժողովուրդի եւ օրէնքի ձայնին : Անոր այդ յաւանք օրինականութեան դէմ փառաւոր եւ շռապաւոր ապտակ մըն է Աղէքսանդրիոյ ժողովրդական վերջին մեծ ցոյցը, զոր հետեւել կերպով կը մանրամասնէ Լաւաքներ թղթակիցը :

Աղէքսանդրիա. 1 Մայիս 1906

Եգիպտահայ զաղութի պատմութեան մէջ նշանաւոր թուական մը պիտի ըլլայ Ապրիլ 29 ի կիրակի օրը յորում Սահմանադրութեան պաշտպանները վճռական եղանակով մը ցոյց տուին իրենց պահանջումը :

Առաւօտուն, Պատարագի միջոցին քանի մը հորիւր հոգի բազմութիւն մը հաւաքուած էր եկեղեցւոյն բակին մէջ, եւ անհամբեր կ'սպասէր ժամրդութեանց աւարտման : Երբ Առաջնորդը, «մաս» իբրաջուելէն անմիջապէս ետքը եկեղեցիէն ելլելու կը պատրաստուէր՝ ժողովուրդին մէջ ձայն տարածուեցաւ թէ «Առաջնորդը անմիջապէս աչքէ հեռացնելու կարգադրութիւններ եղած են», եւ զարմանալի է որ, հակառակ օրհրդութեան, Առաջնորդարանի դուռն ալ փակ էր : Ահա այդ միջոցին եկեղեցւոյն բակին վրայ բարձրացած տեսնուեցաւ Պ. Միհրան Տաճարեան, եւ յանուն ժողովուրդին Առաջնորդէն պահանջեց որ Սահմանադրական օրէնաց համեմատ թաղական խորհրդոյ ընտրութեան ձեռնարկէ : Ժողովուրդը որ այլեւս եկեղեցւոյ մէջ լեցուած էր՝ իր հաւանութեան նշաններով եւ ձայններով ոյժ տուաւ Պ. Տաճարեանին : Առաջնորդը, յանկարծակիի եկած, չփոթութեան նշաններ ցոյց տուաւ,

եւ հազիւ թէ ոտքի կանգնեցաւ իր սթոնին վրայ, իրեն ուղղուած հարցումներուն պատասխանելու : Մարդ բան չէր լսեր իր ռաճիներէն, ուստի ժողովուրդին պահանջումներուն վրայ Առաջնորդը սեղան ելաւ : Այնտեղ աւելի սաստկացաւ Հայր Սուրբին յուզմունքը . երկար ատեն անձայն տխուր կանգնել յետոյ՝ բերանը բացաւ եւ քանի մը խօսք մրմնջեց, իր մօտը գրտնուղները միայն լսած էին իր պատասխանը, որուն իմաստն այս էր թէ «առանց Ս. Պատրիարքի հրահանգին չկրնար ընտրութեան ձեռնարկել» : Ժողովուրդը իմացաւ այս պատասխանը եւ տաքցաւ :

Պ. Տաճարեան՝ աղաչական եւ համոզական բառերով փորձեց խոստովանել Առաջնորդին, բայց նա անդրոտելի մնաց եւ մեկնեցաւ դէս ի սեղանին հետեւի կողմը : Հոն ինքզինք շատ անհանգիստ կ'զգայ, եւ վերջապէս քանի մը վայրկեան ուշաթափ կըլլայ : Զինք չըլլապատուները երեսը ջուր օրակելով կը հանգստացնեն անիկա, եւ նորէն կը խնդրեն, կը համոզեն : Կը թախանձեն արդիւնքը նոյնը կըլլայ : Ասոր վրայ հրաժարական կը պահանջեն իրմէ . «Կը հրաժարիմ» կը պատասխանէ Առաջնորդը, եւ խնդիրը կը լմնցնէ :


Ասկէ յետոյ, ցոյցին պարագլուխները, յետ խորհրդակցութեան, կորցնել փակել Առաջնորդարանը, եւ բանալին յանձնել կառավարութեան : Ուստի Պ. Տաճարեան եւ Պ. Թուրքուհեան գացին խնդիրը ներկայացնելու Աղէքսանդրիոյ կառավարիչ փաշային : Երբ վերադարձան՝ յայտարարեցին թէ իրենց խոստում տրուած է պաշտպանել ժողովուրդին իրաւունքները : Վրայ հասան օստիկանութեան քանի մը պաշտօնեայք, Հանրային սպանութեան պետը, եւ հրամանատար Հօրքինսըն պէյը : Մինչեւ այն ատեն քանի մը հոգի միացած կացինի հարուածներով կոտորած եւ փչրած էին եկեղեցւոյ գրան ճակատի յիշատակարան քարը որ Բարթող փաշայի անունն կը կրէր : Հօրքինսըն պէյին մուտքը ժողովուրդէն ողջունուեցաւ զոհունակութեան ծափերով եւ «հեցցէ՛» աղաղակներով : Պէյը Առաջնորդարանի սրահը ելաւ, եւ ժողովուրդին ներկայացուցիչներուն հետ տեսակցելով՝ յանձնարարեց որ առանց խաղաղութիւնը վրդովելու ամեն ոք ցրուի, եւ Առաջնորդարանի բանալին ալ կառավարութեան յանձնուի : Երբ Հօրքինսըն պէյ մեկնեցաւ՝ եւ Ապահովութեան պետը փակեց եկեղեցւոյ, դիւանատան եւ վարժարանին դռները, պահապան օստիկաններ զնել տուաւ անոնց առջեւ, եւ բանալիները

յանձնեց Պ. Տաճատեանին եւ ընկեր-
ներուն, որ կառավարչատուն տանին :
Այդ միջոցին հասած էր Հայ նուա-
գածուններու խումբն ալ : Բոլոր ժո-
ղովուրդը անոնց առաջնորդութեամբ
եկեղեցիէն ելաւ կանոնաւոր թափո-
րով, եւ Շէրիֆ փաշա փողոցի ճամբով
ուղղուեցաւ կառավարչատուն : Հոն
կտրուեցաւ մարշը նուագուեցաւ, եւ
քիչ վերջ ամբոխը ցրուեցաւ :
Այսօր կը լսենք որ կառավարչատու-
նէն քահանայ Հայրերուն վերադարձո-
ւած է եկեղեցւոյ բանալին, բայց միւս
բանալիները հոն կը մնան :

* *

Աղէքսանդրոյ «ՕՐԷՆՔ» Թուոցիկ
թերթի յաւելածէն .
«Երէկուան կիրակի օրը Ս. Պողոս
Պետրոս եկեղեցւոյն մէջ հաւաքուած
ժողովուրդին կողմէ կարգուած Յանձ-
նախումբս պատեւ ունի ծանուցանել
Աղէքսանդրոյ ամբողջ հայ հասարա-
կութեան որ կառավարիչ Վսեմ Մուս-
թաֆա Բպատի Բաշա , այսօր կէսօրէն
վերջ պաշտօնապէս հաղորդեց մեզ քարձ-
րագոյն իշխանութեան կողմէ ստացու-
ած հրամանը որ կը տրամադրէ Աղէք-
սանդրոյ Հայոց Վարչութեան ընտ-
րութիւնը կատարել ժողովրդական քո-
ւէտով , համաձայն Ազգային Սահմանա-
դրութեան » :


ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ



Ազնիւ Պաշտօնակիցներ ,
Ուսուցչ. Մարմինս՝ իր ԺԱ. րդ. նիս-
տին մէջ՝ նկատողութեան առնելով Ֆի-
լիպէի Ուսուցչ. Մարմինն առաջարկ-
ները, միաձայն հաւանութեամբ տուաւ
հետեւեալ որոշումները, զորս կուգայ
հրապարակաւ բոլոր Ուսուցչ. Մարմին-
ներու նկատառութեան յանձնել .
Ա. Կը խնդրուի բոլոր Ուսուցչ. Մար-
միններէն՝ որ հաճին մինչեւ Մայիս 15
անպատճառ զբաւորապէս դիմել Պատ.
Հոգաբարձութեանց եւ խնդրել անոնց-
մէ որ անհրաժեշտօրէն կազմեն, դպրո-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

Կարիք Անողեր...



(Շար. նախորդ թիւէն)

Ս

—Ուրեմն, ըսէ՛ ինծի, ուսկի՞ց լսած
էիր անունս :
—Ատրկա մի՛ հարցունենք... միայն
թէ՛ կա՞յ միջոց մը ասկից դուրս ել-
նելու... յետոյ կրնանա :
—Ո՛ր պիտի տանիս զիս :
—Մօրդ քո՛վը :
—Կը ճանչնա՞ս մայրս :
—Կը ճանչնամ :
—Ո՛հ, միջոց միայն այս պատուհա-
նէն է : Եթէ չըլլան վանդակապատնե-
րը, դուրս կ'ելնեմ... բայց անկա-
րելի է :
—Դուռնէն չե՞ս կրնար, գալ :
—Ամենեւեմ, որովհետեւ սենեկիս
դուռը շարունակ գոցուած է վրաս ու
սրահին մէջ պահուողն է կան :
—Աղէ՛կ... այս գիշեր պատրաստ
եղի՛ր... ես խարտոցով մը կը կտրեմ
երկաթի ձողերն ու քեզ դուրս կը հա-
նեմ... կ'ընդունիս :

ցական նոր 1906—1907 տարեշրջանին
համար. իրենց Ուսուցչ. Մարմինները
մինչեւ Յունիս 15 : Առժամապէս ան-
պաշտօն մնացող ուսուցիչները եւ ու-
սուցչուհիները պարտաւոր են զբաւո-
րապէս ներկայացնել իրենց հրաժար-
ման կամ հրաժարեցուցման պատճառ-
ները Ուսուցչ. Մարմինն Անդրանիկ
Ժողովին՝ ի նկատառութիւն :

Բ. Ռուսչուգի Ուսուցչ. Մարմինը ին-
քը կը ստանձնէ պատրաստել Պուլկա-
րահայ Ուսուցչ. Մարմինն կազմա-
կերպութեան կանոնադրը, նաեւ՝ մի-
րինակ կրթական ծրագիրը, իսկ Պուլ-
կարիոյ եւ Աղդ. Սահմանադրութեանց
օրէնքներուն ուսումնասիրութեան հո-
գը կը թողու Ֆիլիպէի Ուսուցչ. Մարմ-
նին : Այս նիւթերը մշակուելէ ետք
քննակալաբար պիտի ենթարկուին Անդ-
րանիկ Ժողովին մէջ, բոլոր ուսուցիչ-
ներուն քննադատութեան :

Գ. Պուլկարահայ վարժարաններուն
բալոր ուսուցիչները եւ ուսուցչուհիներ-
ը մեկտեղելու օգտակարութիւնն ի
նկատի ունենալով, կ'առաջարկենք որ՝
գոնէ Անդրանիկ Ժողովին համար՝ պատ-
գամաւորական դրութիւնը յետագուր
յառաջիկային : Այս համարմամբ կա-
տարելապէս յաջողցնելու մտադրու-
թեամբ՝ որոշուեցաւ. նիւթական փո-
խարարձ օգնութեան դիմել : Հետեւա-
բար՝ կը խնդրուի Ուսուցչ. Մարմին-
ներէն որ հաճին. մինչեւ Մայիսի վեր-
ջը անհրաժեշտօրէն օտարել ներկայա-
ցուած, թատրոն, նուագահանդէս եւն .
եւ՝ ասոնցմէ գոյացած գումարներուն
որքանութիւնը հաղորդել, Ուսուցչ. Մարմին-
նին, ինչպէս նաեւ՝ թիւն այն
ուսուցիչներուն եւ ուսուցչուհիներուն
որոնք ներկայ պիտի գտնուին Անդ-
րանիկ Ժողովին : Հակառակ պարա-
գային, եթէ երբեք, բոլոր ուսուցիչ-
ներուն ծախքերու հայմայթումը ան-
կարելի տեսնուի, այն ժամանակ ըն-
դունիլ պատգամաւորական դրութիւ-
նը :

Դ. Ի նկատի ունենալով համագու-
մարի առեւժն Վսեմայի կեանքի սղու-
թիւնը, աւելի յարմար է, ճամբու ծախ-
քէն զատ, օրական 3 ֆրանք յատկա-

—Ամենայն սիրով... բաւական է որ
այս արիւնդի յարկէն ոտքս դուրս հա-
նեմ : Տա՛ր, տա՛ր զիս... վերն՝ Աս-
տուծոյ ու վարը՝ քու վրէժ ինկած եմ :
Ազատէ՛ հոգիս... ա՛լ չեմ կրնար ապ-
րիլ... :

Այս արցունքոտ ու միանգամայն
քստմնեցողիչ պաղատանքէն ետքը՝
մանկամարդ աղջիկը կամաց մը գոցեց
պատուհանն ու հեռացաւ :

Կարիպ Ախպէր անմիջապէս գործն ա-
ւարտեց ու անոռը վերադարձաւ : Մե-
րուկ թուրքը նստած էր ախոռին դու-
ռը : Խնդրեց որ հրաման տայ քաղաք
երթալու :

—Բան մը պիտի գնե՞ս, հարցուց
թուրքը :

—Այո՛, կուգեմ մէկ երկու շապիկ
չինել տալ, պատասխանեց Կարիպ Ախ-
պէր :

—Դիւա՛, բայց շատ մի՛ ուշանար :
Կարիպ Ախպէր գնեց երկու ընտիր
խարտոց ու մէկ ժամէն անոռն եկաւ :
Սպասեց որ գիշեր ըլլար :

Արդ, մութ կոխած էր ու ամեն կողմ
լուսութիւն կը տրե՛ր : Կարիպ Ախպէր
ախոռէն դուրս ելաւ ու Զէքի պէյին
ապարանքին դուռը գնաց : Պզտիկ ա-
թոռ մը առած էր հետը : Այդ փայտէ
չինուած աթոռը դրաւ պատին ներքեւ
ու անոր վրայ ելլելով բարձրացաւ

ցնել իւրաքանչիւր ուսուցչի :

Յարգանք
Ուսուցչ. Մարմին կողմէն՝
Ատենադպիր Ատենապետ
Մ. Պետրոսեան Ս. Ապագաեան
1906 Մայիս 2
ՌՈՒՍՉՈՒԿ

ԲԱՐԻՁԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ



Պատ. Խմբ. «Իրաւունք»-ի

Մարտ 31-ին, խումբ մը փարիզա-
բնակ հայեր հիմնեցին ընկերութիւն
մը «Փարիզի Հայկական Միութիւն»
անունով :

Այս նամակին հետ ձեռք կը զրկենք
կանոնադրութիւնը, որ արդէն ներ-
կայացուեցաւ ֆրանսական իշխանու-
թեանց եւ արձանագրուեցաւ ըստ
օրինի :

Տնօրէն խորհուրդը, որ ընտրուե-
ցաւ հիմնադիր անդամներու ընդհա-
նուր ժողովէն, կը կազմուի հետեւ-
եալ անձներէն. Պ. Պ. Ներսէս խան Ներ-
սէսեան, ատենապետ, Երվանդադէ,
փոխ-ատենապետ, Համբարձում Մէ-
լիքեան Դանձապահ, Ա. Չօպանեան,
ատենադպիր, Բժշկապետ Աւետիք Բա-
բայեան, Յ. Իսկէնտէր, Մ. Յովակիմ-
եան :

Կը խնդրենք որ հաճիք ծանուցա-
նել այս ընկերութեան հիմնարկու-
թիւնը եւ կանոնադրութեան բովան-
դակութիւնը կամ ամփոփումը հրա-
տարակել ձեր թերթին մէջ :

Ընդունեցէք մեր յարգանաց հաւաս-
տիքը :

Ի Դիմող «Փար. Հայկ. Միութեան»
Տնօրէն Խորհրդին

Ատենադպիր Ատենապետ
Ա. ՉՕՊԱՆԵԱՆ Ն. ՆԵՐՍԷՍԵԱՆ
ՓԱՐԻԶ, 36 փողոց (Լաֆայէթ)
8 Մայիս 1906

մինչեւ վանդակապատ պատուհանը :
Հաշուեց որ երեքը միայն կտրելով՝ եր-
կաթէ գլաններուն՝ պիտի կրնար նպա-
տակին հասնիլ : Ուստի, առանց ձայն
տալու. երկուդարի գզուցութեամբ մը
գործի սկսաւ, ինքզինքը նուրիչով
կննաց ու մահու վտանգի մը : Դիւան-
ներուն երկուքը յաջողեցաւ կտրել
վարի մասէն ու դուրս հանել : Ան ա-
տեն կրկնափեղկը բացուեցաւ ու մու-
թին մէջէն ձայն մը հարցուց :

—Դո՛ւն ես :

—Այո՛, ես եմ... պատասխանեց

Կարիպ Ախպէր :

—Քանի՞ հատ կտրեցիր :

—Երկու հատ :

—Բաւական է... ես կրնամ ան-

կից անցնիլ :

—Աղէ՛կ... ուրեմն եկո՛ւր :

Մանկամարդ աղջիկը բացաւ ապա-
կին ու տանջանքով մը գլուխն ու մար-
մինը վար երկնցուց : Կարիպ Ախպէր
զրկեց զանի ու դուրս քաշեց այդ ա-
րեւնոտ օրէնքն :

Յաջողութիւնը կատարեալ էր : Աս-
տուծոյ աչքէն զատ՝ ուրիշ մէկը չը
սեսաւ այդ զարհուրելի գործադրու-
թիւնը :

Երբ մանկամարդ աղջիկը վար իջաւ
ու ոտքը դրաւ փողոցին մէջ, կարծես
թէ ուրախութենէն ուժ չը մնաց էու-

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՊԱՏԱԿ

ՅՕԴՈՒԱՄ 1. «Փարիզի Հայկական
Միութիւն» Ընկերութեան նպատակն
է .

Ա. նպատակ, օրինական միջոցնե-
րով, հայ ազգի բարոյական եւ նիւ-
թական շահերու պաշտպանման :

Բ. Ճանչցնել քաղաքակիրթ աշխար-
հին՝ Հայութեան անցեալ ու ներկայ
կեանքը եւ մտաւոր գործունէութիւ-
նը :

Գ. Տարածել հայ ժողովրդին մէջ
արեւմտեան քաղաքակրթութիւնը :

ԳՈՐԾՈՒՆԵՆԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՅՕԴՈՒԱՄ 2. «Փարիզի Հայկական
Միութիւն»-ի նպատակն իրագոր-
ծելու համար ի գործ պիտի գնէ հե-
տեւեալ միջոցները .

Ա. Պիտի օգնէ տաղանդ ցոյց տուող
հայ ուսանողներու, զոր Տնօրէն Խոր-
հուրդը արժանի կը գտնէ :

Բ. Պիտի նպաստէ հայ թատրոնի
զարգացման :

Գ. Պիտի օգնէ հայերէն լեզուով
գրական գիտական, պատմական, գեղ-
արուեստական ինքնագիր ու թարգ-
մանական գործերու, ինչպէս եւ օտար
լեզուով Հայութիւնը ներկայային
ճանչցնել ձգտող աշխատութեանց
հրատարակման :

Դ. Պիտի կազմակերպէ Փարիզի՝
ինչպէս եւրոպական ուրիշ քաղաք-
ներու մէջ՝ երեկոյթներ, հանդէսներ
եւ դասախօսութիւններ հայ երաժշ-
տութիւնը, գրականութիւնը եւ ընդ-
հանրապէս հայ արուեստը եւ Հայոց
անցեալ ու ներկայ պատմութիւնը
ճանչցնելու համար եւրոպական հա-
սարակութեանց :

Ե. Պիտի հրատարակէ գրքեր՝ նոյն
նպատակով :

Զ. Պիտի ջանայ մասնակցիլ՝ իր
ներկայացուցիչներուն միջոցով՝ գը-
րական, գիտական եւ այլ միջազգային
համաժողովներու :

Է. Ազգային մեծ աղէտներու եւ
ղժժաղութեանց պարագային՝ նիւ-

թեան խորն ու ինկաւ իր ազատաբա-
րին գիրկը :

Կարիպ Ախպէր աթոռը մէկ կողմը
նետեց ու աղջիկն առած ուղղակի վա-
րագայ վանքը դիմեց : Գիշերուան ժա-
մը տասներկուքին մօտ էր երբ վանքին
դուռը հասաւ ու սպասեց : Աստուծոն
աղջկանը հետ վանահօրը ներկայացաւ
ու ըսաւ .

—Այս աղջիկը վերն՝ Աստուծոյ, ու
վարը ձեր սրբութեան կը յանձնեմ :
Հոգի մըն է, որ՝ անկուսի մը մէջէն
վերկուած՝ կրնայ այս վանքը թո՛ղ
մնայ հոս մինչեւ որ վերադառնամ ու
տանիմ ծնողքին քով :


Բարեախօս կղերականը սիրով ըն-
դունեց ու՝ ձեռքն իր աղիքաւոր մազե-
րուն տանելով, միմեջեց .

—Ո՛հ, դի՛մ ի՞նչ օրերու պիտի հաս-
նինք, Աստուած իմ :

Ու խանդաղատալի հօր մը պէս պա-
տուիրեց որ իր սենեակէն դուրս չ'ելնէ
ու բնաւ չը վախճայ :

Կարիպ Ախպէր նոյն օրը քաղաքը
վերադարձաւ :

(Շարունակելի)



թական եւ բարոյական օգնութիւն պիտի ջանայ հասցնել հայ արկած-եալներուն :

Ը. Պիտի հիմնէ Փարիզի մէջ հայ-կական թանգարան մը, եւ հայկական մեծ մատենադարան մը ուր պիտի հաւաքուին հայերէն լեզուով երեւցող բոլոր լրագիրները գրքերը, հին ձեռագրերը, ինչպէս եւ օտար լեզու-ներով Հայոց մասին լոյս տեսած բոլոր հրատարակութիւնները :

Թ. Պիտի աշխատի հիմնելու Փա-րիզի մէջ գիշերօթիկ միջնակարգ քոլէժ-վարժապետանոց մը :

Ժ. Պիտի հիմնէ «համազգային ֆօնտ» որ պիտի պահուի եւրոպական մեծ գրադատան մը մէջ, ըստ որոշման Ընդհ. Ժողովին :

«Ֆօնտ»ը պիտի կազմուի ընկերու-թեան տարեկան հասոյթներուն հա-րիւրին քսանը վար դնելով, ինչպէս եւ այդ նպատակին համար մասնա-ւորապէս նուիրուած գումարներով : Կազմուած «ֆօնտ»ի տարեկան տոկո-սը կարող է ծախսուիլ ընկերու-թեան ընթացիկ գործառնութեանցը՝ ըստ որոշման Ընդհ. Ժողովի :

Ընդհ. Ժողովը կորոշէ՝ իւրաքան-չիւր տարի՝ Ընկերութեան տրու-մադրած նիւթական միջոցներուն համեմատ թէ՛ այս այլազան ձեռ-նարկներէն նախ որոշք եւ ինչ չափով պէտք է իրագործել :

ՈՒՐՄԻՈՒՄ ՀԱՅ ՈՐԲԱՆՈՑ ՉԱՄՑ

Այս էր մեր առաջարկը, այս է մեր վերջաբանը եւ այս կը լինի մեր եզրա-կացութիւնը՝ Ուրմիում հայ որբանոց չկայ :

Բայց մի ինչ որ Պ. «Առաքելեան», ընդդիմախօսելով մեզ՝ ցանկութիւն է յայտնում հաստատել մեր գրածի հա-կառակը : Նա ինքն «Առաքելեան» ինչ-պէս ասում է, եղել է խոյի հայ որ-բանոցի սաներից եւ ուսում էլ ստացել՝ ինչպէս երեւում էր իւր գրած յօդ-ւածից, որի վերեւ զետեղած էր մի անգղիացի պապական յանդուրձն վը-ճիւ, թէ «Հայերս չեն շահագործեր», հա-նա խորհրդածութեան, գրելու, ի-մաստատիրելու եւ վիճելու մի ահա-զին նիւթ, որը բաց կը թողնենք, մենք խնայելով խոյի սանիկին եւ միայն կը հարցնենք իրան, թէ Պարոն գուցէ ինչ էք իմանում որ հայերիս չեն շահագործում, այդչափ էլ ընդարձակ եւ անորոշ վճիռ... Երեւի անտեղեակ էք պատմութեան, որ տալիս էք այդ-պիսի մի համայնագիտական եւ մար-գարէական իսկ մի վճիռ՝ թէ հնայէրը չեն շահագործեր, երեւի գուցէ վերջին տարիները անցքերին էլ տեղեակ չէք, ուրիմ ինչը ստիպեց ձեզ ելնել եւ պաշտպանել հայութեան անհամար թշ-նամիները, դաւաճանները, խաչագող-ները եւն, դուք Պարոն չէք իմացած թէ հայերին շահագործողներ եղան, որիհապ, հայապատկան փողերը բա-ժանելիս վանում եւ Մուշում կաթո-լիկ կղերը իւր տուած փողին դէմ հա-յի դաւանափոխութիւնը պահանջեց : չէք իմացած թէ Ռուսմանիան քանիցս շահագործեց մեզ, նոյնպէս եւ Ռուսիան եւ Գերմանիան ... ու տակաւին ուրիշ ազգեր եւ անհատներ, որոց շարանը մին-չեւ օրս էլ գեռ չէ սպառած, զարմա-նում եմ, թէ դուք ինչ մտքով մի այդպիսի վտանգաւոր փաստաբանու-թիւն ձեր վրայ ստանձնեցիք եւ ջանք էք անում դաւաճանների, անբարոյա-կանների լեզուն մը պաշտպանել :

«Հայերը չեն շահագործեր» ըսելով : Հաւ չէ՛ր լինել, որ դուք եւ ձեզ նման «Առաքելեաններ» ո՞վ գիտէ ինչ մի-տումներով (ձեր բառն է պ. յօդուածա-գիր) պաշտպանէիք միայն ձեր Պ. Լէփ-սիուսին եւ փաստերով հաստատէք մեր ասածի հակառակը, եւ՝ կօշկակարն ց'կօշկակն մնար : Երեւի խոյի որբանո-ցում տրամաբանութիւնը շատ լաւ կամ գոնէ լաւ չեն սովորեցնել ձեզ : Մանաւանդ երբ համարձակում էք ա-սել, թէ դրանք «հայերիս յատուկ ա-նիմաստ եւ անշահ խօսքեր, ֆրազներ են ... եւն. չարաչար մեղանչում էք, դրանով էլ հաստատում թէ դուք գեռ մանուկ մ'էք, աշխարհի համար, ուս-տի մենք պարտաւորուած ենք, իբրեւ Պապիկ յայտնել ձեզ եւ ձեզ նմանե-րի թէ հարկ չէ ուրիշ անգամ կօշկակց վեր ելնել, թէ ձեզ պատասխանելով յայտնում ենք որ դուք կամ սխալում, էք եւ կամ խաբում :

Դուք պ. ընդդիմախօս, իբրեւ եր-բեմի սանիկ խոյի որբանոցին եւ իբ-րեւ Ձ—Յ ամիս հիւր ուրմիական հնայ որբանոցին ? ? Եւ իբրեւ այժմեայ բարեկամ կամ պաշտօնեայ գուցէ եւ պաշտօնակից պ. Լէփսիուսի գոր-ծակիցներին ի հարկէ շատ յայտնի պատճառներով ինչ գէ՛տ գրելու պար-տաւոր էիք զգում ձեզ, զովում եմ ձեր այդ երախտագէտ պարտաճա-նչութիւնը, ուրիշ ձեզ նման շա-տեր էլ այդպէս կը մտածեն կար-ծում եմ, բայց պէտք է իմանաք որ խօսքերը փաստեր չեն, ոչ այնչափ առաջադրելով՝ այլ աւելի ժխտելու համար փաստեր են հարկաւոր : Դուք թէ եւ այդպիսի մի փորձ անում էիք «Ի. աւուսն»ի մէջ մի քանի գերմա-նական անուններ նշանակելով եւ ձեր երկար յօդուածին մէջ բուն հարցը չօշտփող մի խօսք միայն կարողա-ցել էիք գրել որպէս փախս թէ Ուր-միում Ձ—Յ ամիս հիւր էք եղել որբանոցում, սա այնչափ տկար կամ անկար փաստ է, որ քրիթիկայի մի ամենափոքրիկ զարկովը ջարդ ու փշուր կը լինի, փորձենք, պատաս-խանում եմ—Դուք Ուրմիում, ասո-րական որբանոցում հիւր եղաք—Ուրիշ է, պատասխանեցէք : Բայց նախ քան ձեր պատասխանելը՝ մենք աւելի պարզենք բուն հարցը եւ ո-րոշապէս յայտնենք, թէ պ. Լէփսիուսի հայապատկան փողերով Ուրմիում բաց արեց որբանոց, բայց ասորիները համար եւ դուք այդ ասորական որ-բանոցում հիւր եղաք, հետեւաբար Ուրմիում չէ՛ք ՀԱՅ ՈՐԲԱՆՈՑ ՉԱՄՑ, ՉԿԱՅ : Մենք այդ որբանոցը մեր աչօք տեսած ենք, կամ ձեր ճարտա-սանական աստիճամը «արեւու պէս լոյս արեւի տակ կը փայլի» բայց այդ որբանոցում կը պահուին ասո-րի մանուկներ եւ ոչ հայ որբեր, հասկանում է՞ք, դեռ կը հաճե՞ք արդ-եօք հակառակը պնդել, չեմ կար-ծում : Ուրեմն, վտանգեցէ՛ք որ Ուր-մին ձեզանից լաւ ենք ճանաճում, ինչպէս գրել էիք «Հանիաւ այժմ էլ աւելացնում ենք, որ ուրմիական լը-ճում կան 96 մեծ ու փոքր կղեր-ներ, որք մեզ անձանօթ չեն, հետե-ւաբար կարող էինք տեսնել եւ հոյ որբանոցը Ուրմի քաղաքին, եթէ գոյութիւն ունենար : Եւ եթէ տակա-ւին դուք դուռն երախտագիտու-թիւնից մղւած պնդէք փորձել գո-յութիւնը անգոյ հայ որբանոցին, այն ատեն իբրեւ ընդունիլի փաստ հաճեցէք այդ որբանոցում հաւանա-բար (ըստ ձեր բաղդատական հայի)՝ այն տեղ գտնուած 240—250 հայ որ-

բերի կէսին կամ քառորդին անուն-ները հրապարակել, եթէ ամբողջին ցանկը չունիք, եւ մինչեւ այն ժա-մանակ հաւատում եմ, թէ Ուրմիից որ եւ իցէ մի ուղղամիտ հայ մարդ կամ պաշտօնական մի մարմին հրա-պարակաւ կը գայ վերջ դնել այս հարցին յայտնելով թէ Ուրմիում հայ որբանոց չկայ :

ՊԱՊԻԿ

3 Մայիս 1906
Ֆիլիպէ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Տեղւոյս Աղքատախնամ Ընկերու-թեան Գործադիր Ժողովս Ապրիլ ամսոյ մէջ Շնորհակալութեամբ ստացաւ հե-տեւեալ նուիրատուութիւնները, Պատ. ազգայիններէ.

Տիար Արմենակ Փէշիկմեան Ո. Զատիկ առթիւ եւ Տ. Տօք. Յարութիւն Փափազեան իր անուան առթիւ 5 ա-կան ֆրանք : Տեարք Նիկողոս Գէս-տանեան Ս. Զատիկ առթիւ, եւ Յա-րութիւն Զօլաքեան, Յարութիւն Մա-լէգեան, Յարութիւն Էնկիպարեան, Յարութիւն Հաճօրեան, Յարութիւն Տէյրիմէնեան իրենց անուան առ-թիւ 2 աւան ֆրանք : Տիար Գէ-որգ Հալաճեան նուիրեց 1 ֆրանք : Տեարք Յարութիւն Ժանկիւրեան, Յա-րութիւն Թաչճեան, Յարութիւն Գա-ֆաֆեան իրենց անուան առթիւ 1 ա-կան ֆրանք, իսկ Յարութիւն Սիմէ-եան իր անուան առթիւ 50 սանթիւ : Գումար 26. ֆր, 50 սնդ.

Տ. Մ. Մանուկեանի սրճարանի գան-ձանակէն 11 ֆր. 50 սանդիւ : Տ. Գ. Միքայէլեանի սրճարանի գանձանակէն 10 ֆր. 75 սանդիւ :

Ընդհանուր գումար 48 ֆր. 75 սնդ.

Ի Դիմաց Գործ. Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Ու. Զարպիսեան Ս. Սարգիսեան
1906 մարտ 29
Վառնա

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Սանասարեան վարժարանի իւր-նամակալութիւնը կարին զրկած է փաստաբան Տ. Գրիգոր Զա-քարեանը, որ պաշտօն ունի քննու-թիւն կատարելու այն գանգատ-ներու մասին, որոնք վերջերս ազդուօրէն երեւան եկած են, վարժարանին ներքին տեսուչնե-րուն, ուսուցիչներուն եւ աշա-կերտներուն միջեւ ծագած ան-համաձայնութեանց հետեւանօք, Արեւելք կրէ թէ՛ այդ գանգատ-ները առաջ կուգան ներքին տե-սուչներուն իրենց պաշտօնին մէջ ունեցած թեւաբացումներէն եւ յո-ւրի մատակարարութենէն :

—Պոլսոյ Պատրիարքարանի Գաղ. Ժողովը ամսականի յաւե-լումներ ըրած է մէկ քանի պաշ-տօնեաներու :

—Պոլսոյ Մայր եկեղեցւոյ մէջ այս կիրակի առաջնորդութեամբ երաժշտապետ Տ. Մէհտէրեանի եւաճախ պիտի երգուի պատա-

րագի արարողութիւնը : Եւա-ճախի պատրաստուած խումբը 120 հոգիէ՝ որոնց 60ը աղջիկ՝ կը բաղկանայ եղեր. նաեւ խումբին ձայնին պիտի ընկերանայ եր-գեհոնի մը ձայնը :

—Կարնոյ առաջնորդ Տ. Զաւէն Վրդ. Բաբերդ գացած ըլլալով, Պոլիս երթալու համար Պատրի-արքարանէն հրամանի կը սպա-սէ : Կարնէն հասած նախկին մը կը հաղորդէ թէ Առաջնորդին համար գանգատներ եղած ըլլա-լով, տեղւոյն խառն ժողովը նիստ գումարեր է այդ խնդիրը քննելու համար :

—Սեբաստիոյ առաջնորդ Տ. Պետրոս արք. ինք ծերացած ըլ-լալով, խնդրած է Պատրիարքա-րանէն խոհական եւ լուրջ վար-դապետ մը, որ կարող ըլլայ թէ՛ այդ կեդրոնին մէջ քարոզ խօ-սելու եւ թէ՛ գիւղերը այցելե-լով ժողովուրդը սիրաշահելու եւ մխիթարելու :

—Ակնայ Առաջն. Տեղապահ Տ. Կորիւն վրդ. Եսայեան արտօ-նութիւն ստանալով, Պոլիս կը վերադառնայ. նա արդէն Պատ-րիարքարան զրկած է իր եօթ-նամեայ պաշտօնավարութեան տեղեկագիրը :

—Աղէքսանդրիոյ հայ ժողովրդ-եան ցոյցին յաջորդ կիրակին, կառավարութեան թեկադրու-թեամբ միթիւնկ մը գումարուած եւ հոն ընտրուած են երեք ներ-կայացուցիչներ, որոնց պաշտօնն է ժողովուրդին իրաւունքներուն եւ փափաքներուն թարգման ըլ-լալ ու հսկել ընտրական գործու-թիւններուն : Առաջնորդ Ս. Ղաւնուհի Տ. Մկրտիչ վարդապե-տը եւ «ուշ մնացած» յայտարարու-թեամբ մը ծանուցած է թէ որո-շա՞ծ է տեղւոյն թաղ. Խորհրդոյ նորոգ ընտրութեան ձեռնարկել : Առաջնորդը այլեւ հարկ չէ տե-սեր Ս. Պատրիարքէն հրահանգ ուղեւոր որուն պէտք չկար ար-դէն, բայց ինք կը պնդէր, կար-ծելով թէ ազատ երկիրներու մէջ ալ թուրքիոյ նման կարելի է ժողովուրդին ձայնը խեղգել :

« Կ Ռ Ո Ւ Ն Կ »

ՀԱՆԴԷՍ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

(ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒՆ.)

(ԵՌԱՄՍԵԱՅ)

- ԿՌՈՒՆԿԻՆ նպատակն է՝
1. Հայ Արուեստը ճանչցնել Հայուն,
 2. Եւրոպ. Արուեստը ճանչցնել Հա-յուն,
 3. Հայ Արուեստը ճանչցնել Եւրոպա-ին :
- ԿՌՈՒՆԿԻՆ տարեկան բաժնեգրին է՝
- | | |
|----------------|----------|
| Եւրոպայի համար | 10 ֆրանք |
| Ամերիկայի » | 2 դալէր |
| Ռուսիոյ » | 4 ռուբլի |

Անգլիոյ » 8 շինին
Տաճկաստան » 50 դահեկան
«Կոստենկ» էն օրինակ վր իբր նմոյշ
ԶԻՐ ստանալու համար պէտք է գրել
հետեւեալ հասցեով

Ք. ԲՐՕՅԹ-ՔԱԼԵՍԱՆ
Տիրակալ-Քալաթի «Կոստենկ»
159 Պոլսի Մոսկովսկայա (ԲԱՐԻՍ)

ՀԱՎԱՍՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻՍԻԱ

Սթանպոլտան պիր թէլէկրա-
ֆա պինաէն, կէչէն սէնէ սէրայ
էնթրիդարար սէպէպլէ Սիւրէ-
այա սիւրիւմիւշ օլան տէլի ծու-
ատ բաշանըն էվրազարընը
Սուլթան կէօրմէք իսթէմիշ, րէ-
վայէթէ կէօրմէ ծուտո բաշանըն
րուսթպէ, նիշան վէ մէմուրիյէ-
թինին թէքրար իստէ իսթիւմի-
նի տախի էմր իտէճէք իմիշ :

Զէթինատան պիր թէլէկրաֆա
պինաէն, Գարատալ սինօրընա
եազըն թիւրք ասքէրլէրի վէ
խրիսթիան էհալի պէյնինտէ
պիր միւտարէպէ վուգու պուլմուշ,
չօգ քիշիլէր էօրմիւշ վէ եարէ-
լէնմիշ, պիր չօգ խրիսթիան ֆա-
միլիալար Գարատալ գաշմազ-
տա ըմըշլար :

—Սթանպոլտա Սուլթան Ահ-
մէտ մահէլլէսինտէ պիր գօնագ-
տա պօմպալար պուլընտըր Պա-
պը Զապթիյէ իսպար օլընմըշ,
վէ սահիհէն պիր գաշ պօմպա
պուլընմըշ օլտըլընտան պաղը
քիշիլէր տէրտէսթ իսթիւմիշ տիր,
իշպու պօմպալարըն նէճիպ Թէլ-
համէ բաշանըն ատամլարը օլ գօ-
նաղա կէօթիւրմիւշ օլտըլարը
մահէլլէլիէր թարաֆընտան
թատտիգ օլընմուշ :

—Սթանպոլտա մայիս 1 տէ
Սուլթանըն հիմայէսի աթընտա
վէ Վէսուվ եանար տաղտան միւ-
թէզարուր օլան ֆագիլ իթալիա-
լըլար մէնֆաաթընա օլարազ պիր
գօնէթ վէրիւլապ, պէօյիւկ հա-
սըլաթ օլմուշ տըր, Սուլթան
քէնտիսի 1000 լիրա վէրմիւշ :

—Մըսըր սինօրը մէնէլէսինին
պու տէրէճէլէ կէլմէսինէ Սուլթան
իզզէթ բաշայը սէպէպ թուլթուպ,
անը եիւզտէն պըրազմըշ, ինկի-
լիզ էլիշիսի իսէ մէսուլիյէթի Մը-
սըրտաքի թիւրք գօմիսէրի
Մուլթար բաշայա աթֆ իտուպ,
անըն կէրի չաղըրրլմաընը թէք-
լիթ իթմիշ տիր, Ֆագաթ Մուլթ-
թար բաշա Սթանպոլա կէլմէք
իսթէմէք զիրա Սուլթանըն էսկի
զարէզինտէն գօրգար :

—Սթանպոլտան պիր թէլէկը-
րաֆա պինաէն, կէչէն ճուճա էր-
թէսի կիւնիւ Մանաստըր վիւա-
յէթինտէ 10 Գուցօ—Ուլահ ֆա-
միլիալար 40 թիւրք ասքէրլէրին
րէֆագաթը իլէ քէօյտէն գասա-
պայա կիտէր իքէն՝ 200 քիշի-
լիք պիր ընդ չէթասը անլէրին

իզգէրինէ հիւճուճ իթմիշ վէ 18
ասքէր էօլտիւրմիւշ, զապիթի
եարրէլէնմիւշ, Ուլահարըն մըգ-
տարը թէլէֆիաթը պիլինմէյօր :
—Օն քիշիլիք պիր սըրպ չէ-
թասը Գոսովա վիւայէթինտէ Օս-
մանիէ գասապասընտա թիւրք
ասքէրլէրի թարաֆընտան ճու-
ճա էրթէսի կիւնիւ մահվ օլըն-
մուշ :

Եունան հիւքիւմէթի ընդ չէ-
թալարըն թիւրքիայա կէչմէսի
նի մէնն իթմէք իշիւն սինօրա
ասքէր էօլմարը տըր, զիրա է-
կէր ընդ չէթալարըն Մաքթիւ-
նիատա ալէլիաթը տէվամ իտէ-
ճէք օլտը իսէ՝ Րուսիա—Եուն-
ան իսթիւլաթը եէնիտէն ալէֆ-
լէնէճէք վէ աղըր նէթիճէլէր
հուսուլա կէթիւրէճէք տիր :

—Պէտրիսանը Ալի Շամիլ բա-
շանըն սիւրկիւն մահէլլինտէ քէն-
տիսինի իսթիւլաթը իտէն բր-
գուրօրը գաթլ իթմէսինի Սուլ-
թան տուլմասընտա անըն ասըլ-
մասընը էմր իտէր, քէզա թէչ-
րիֆաթը Ապտիւլ Բազազըն ա-
սըլմասընա էմր վէրիւմիշ տիր :

Պու Գիւրտէրի ալէնի մուհա-
քէմէ իթմէքսիլիւն Աֆրիգանըն
պիր քէօչէսինտէ աստըրմայա
Սուլթանըն էմր իթմէսինին ա-
սըլ սէպէպլէ էրմէնիստան գըր-
կընլարընա տօղրուտան տօղրու
Սուլթանտան էմրիլէր վէ լթա-
լիմաթլար վէրիւմիշ օլմասընը
ալէնէն սէօյլէմէյէ մէյտան պը-
րագմամագ մագսէտի տիր :

Տ Ա Ի Ի Լ Ի

Թիւրքիա վէ Պուլկարիա պէյ-
նինտէ կէօմրիւկ մուղալլէնա-
մէսինին թանգիւմի իշիւն պիր
վագըլթտան պէրու Սթանպոլտա
տէվամ իտէն միւզէքէրաթ բէք
աղըր եիւրիւմէքտէ օլտըլը կի-
պի, պիրտէ մէքքիւր միւզէքէրա-
թըն պիւա նէթիճէ գաթ օլընա-
ճաղը զանն օլընիյօր, զիրա թիւրք-
լէր Պուլկարիանըն չարթլարը-
նը աղըր կէօրմէքտէ իմիշլէր :
քէզա Սօֆիա հիւքիւմէթի քէն-
տի մուրախասլարընա եէնի պիր
թալիմաթ վէրուպ, Թիւրքլէր է-
կէր Պուլկարիանըն թալէպլէրի-
նէ միւսատէլի սուրէթտէ նազար
իթմէք իսթէմէպլէր իսէ՝ միւզէքէ
րաթը գաթ իթմէլէրինի էմր իթ-
միշ տէյօրլար :

—Վարնա ըրըգտըմընը վէ
իլիմանըն րէսմի քիւլատը պու
այըն 18 ինտէ մուլթանթան սու-
րէթտէ իճրա օլընաճագ տըր :
Հիւքիւմէթ, տէվլէթլէրէ տալէթ-
նամէլէրէ օլլայուպ, Սթանպոլ-
տաքի էլիշիլէրին մայէթ վաքօրլա-
րընըն տախի իշթիւրաք իթմէլէ-
րինի թէքլիթ էյլէմիշ տիր :

Պու միւնասիպէթլէ էհալիյէ
գօլայլըգ իշիւն՝ Պուլկարիաա-
քի պիւլթիւն չըմէնտըքիլէր

մայիս 15 տէն 17 է գատար եա-
րը ֆիւյաթլէ պիլէթ վէրէճէքլէր
տիր, պու պիլէթլէրին 10 կիւն
վատէսի օլաճագ տըր, ֆագաթ
վարնատան կէրի կիտէր իքէն
սթասիօնտա գայտ իթտիւմէք
իգթիլա իտէճէք :

Ր Ո Ւ Ս Ի Ա

Պէրլին—Ֆուիթէ Զայրուսկ ըն
Բէթերսպուրկտան ալտըր պիր
չայէթա պինաէն, կէօեա՝ Րուս
հիւքիւմէթի կէլէճէք հաթթա
Տոււայը տաղըլթմագ նիյէթինտէ
իմիշ, Սօսիալիսթ Ֆօրմիլէրքց նամ
ալման կաղէթասը Գալվաթատաքի
(Րուսիա) մուհաթը ասքէրլէրին-
տէ եէնի պիր իսթիւլալ թէչքի-
լաթը թէչսիս օլընտըրըն եա-
ղուպ, պու թէչքիլաթ չու, կիպի
իլան օլընմըշ տըր : «Պիզ Ուրալ
օրտուսընը 12 ճի բիյատէ ալա-
յըն ընդ ասքէրլէրիմիլ պիրաա-
քէրի իսթիւլալ թէչքիլաթը» թէ-
սիլ իտէյօրըլ, մագսէտիմիլ իշ-
ճիլէրէ պիրլէչէրէ Սօսիալ—տէ-
մօկրատլար թալէպլէրինին իճ-
րասընա չալըլմագ տըր» :

—Պէրլին 3 Մայիս—Մէնպաի
մէվսուգէյէ պինաէն, եաղընտա
Րուսիա վէ ինկիլթէրա պէյնին-
տէ պիր մուգալլէնամէ իմզա-
լանաճագ ըմըշ, իշպու մուգալլէ-
լէ իլէ լիսիա չարգիտէ իքի տէվ-
լէթլէր քէնտի մէմալիքլէրինի
թէմին իտէճէքլէր վէ լլճէմիս-
տանտա մէնֆաաթլարընը տա-
իրէլէրինի թային ու թագսիմ
էյլէյէճէքլէր :

—Զօլօէ Վրէմիւսըն պէյանը
իւզրէ, վիւքէլա մէճլիսի աթվը
ուճուճ իշիւն միւզէքէրէտէ պու-
լընմըշ, ֆագաթ թագսիւլաթընա

կիրիշիլմէմիշ, Մէքքիւր կաղէ-
թայա պինաէն, քէզա մէճլիսի
վիւքէլա Տոււանըն գարաթթէ-
րինի հիւքիւմէթի հաղըրէյէ
մուլալիթ օլտըլընտան, անը տա-
ղըլթմագ իշիւն տախի միւզէքէրէ
իթմիշ իսէտէ մուլաթարալը
կէօրմիւշ :

—Տոււա Զարըն նուլթընա ճէ-
վապնամէսինի հաղըրլատը, պու
ճէվապնամէտէ տէմիշ տիր քի-
հիւքիւմտարըն նուլթըր հոկտ .
17 տէ սուտուր իտէն մանիֆէս-
թին ահքեամընճա օլան թէ-
սիսաթը, եանի Տոււայը վէ Սահ-
մանագրուլթիւն թէմէլլէրինի
պօզմայաճաղընը վատ իտէյօր :
Տոււա քէնտիսինի վաղիֆէտար
ատտ իտէյօր կէօսթէրմէք իշիւն
քի՝ մէմալիքին չիւտիքի աշվալ
ու իտալէսի անըն գուլվէթլէ-
րինի եէնիլէմէք զայրէթինէ մա-
նի օլաճագ, Մանիլէրին պաշ-
լըճասը իտարէի էօրֆիյէ տիր
քի՝ Զարը քէնտի էհալիսինտէն
այրիիյօր վէ հոկտ. 17 տէքի մա-
նիֆէսթին թէմէլլէրինի թէճա-
վիւզլէ, պիւլթիւն մէմալիքտէ
մուհաթէմէսիլ հիւքիւմէր վէ-
րուպ իճրա իթմէքտէ տիր :

—Ալմանիա հիւքիւմէթի Րու-
սիատան գաշմըշ օլան մուհա-
ճիլլէրի՝ էքսէրիսի Եահուտի
օլարագ, սինօրընտան տըշարը-
աթիյօր :

Одговорникъ А. Курбетянъ
всѣхъ писемъ а Д. Тодоровъ и С-не-В. Г. Г. Г.



OMEGA 8038 001-44

ՅԱԿՈԲ ԹՕՍՊԵՐԵՐԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՎԱՌՆԱ

Բարիգու, Ժընէվի եւ Պուլքէլի ցուցահանդէսներուն մէջ մեծագոյն պարգեւներ
ստացող ու համաշխարային գնահատման բարձրագոյնին արժանացող այս ժամա-
ցօյցի գործարանը «ՕՄԵԿԱ» իրօք իր անունը արդարացեալ տէ իբր ճարտա-
րարուեստը կատարելագործութեանց վերջին աստիճանին ՕՄԵԿԱ ին հասցնող
հաստատութիւնն ըլլալը :

Այս հռչակաւոր Գործարանին ներկայացուցիչն է Տ. Յակոբ Թօսպըրըքեանի վա-
ճառատունը, ուր կը գտնուին «ՕՄԵԿԱ» ժամացոյցներու բոլոր տեսակները, ոսկեայ,
արծաթեայ եւ պողպատեայ ամեն չափէ ու մեծութենէ. Գիւնըրը, ԶԱՓԱԻՐՈՐ :

Կր գտնուին նաեւ Պուլկարիոյ բոլոր կարեւոր ակնավաճառներու եւ ժամա-
գործներու քով :